

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
խւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻՖՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Բարեւոյն Բիւրքեան՝ իր Ստեփան, Յովհաննէս, Մկրտիչ և Մարիամ որդիներն-
ցով և իր փեսայ Յակոբ Գաղանձեան յայտնում են բոլոր յարգելի բարեկամներին ի-
րանց անմոռանալի վիշապ յանձին

Ս Ի Մ Է Օ Ն Յ. Գ Ի Ր Ք Ճ Ե Ա Ն Ի

որի վշտալի մահը տեղի ունեցաւ ամսին 20-ին: Հոգեհանգիստը կը կատարվի ուր-
բաթ, երեկոյան ժամի 7-ին, իր ընտանեացիներով և ընտանեակներով և զանազան փողոց № 79, Սա-
ֆարովի տուն: Յուզարկաւորութիւնը ամսին 25-ին, շաբաթ օրը, առաւօտեան ժամը
10-ին դէպի Կոնկիայի կաթօլիկներէ եկեղեցին: Թաղումը Կոնկիայի գերեզմանատանը:
1—2

Ուրբաթ, ապրիլի 22-ին, ցերեկվայ 12 ժամին,

Ի Ս Ա Յ Ե Գ Օ Ր Օ Վ Ի Զ Փ Ի Թ Օ Ե Վ Ի

մահվան տարեկիցին Մոդուս. Գ. Գեորգի եկեղեցում կը կատարվի հոգեհանգիստ, որի
մասին յայտնում են ազգականներին և ծանօթներին այրի Օլգա Ստանիսլավովնա
Փիթոնովա և դուստր Մարգարիտա Իսահիլա Բելեցկայա:
1—1

Ուրբաթ, ապրիլի 22-ին,

Ի Ս Ա Յ Ե Գ Օ Ր Օ Վ Ի Զ Փ Ի Թ Օ Ե Վ Ի

մահվան տարեկիցի առիթով, «Իսայ Եգորովիչ Փիթոնով և Ընկ.» Ա/Տ. գրասենեակը
Թիֆլիսում փակ կը լինի:
1—1

ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ

Խղճի ազատութեան ընդարձակումը Ռու-
սաստանում.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայկա-
կան հանրագրի կէտերը. Բագուի քաղաք-
ապետ Բրեցկի և փետրվարեան կոտորածը.
Թաթուսի և երաժշտութիւն. Ներքին լուրեր.—
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը.
— ՀԵՐԱՊԵՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.
— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամականքի Ալթիբից:

ԽԼՃԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄԸ
ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Կայսերական նոր ուղղութիւնը, որ հրատա-
րակում ենք «Մշակի» այսօրվայ համա-
րում, ընդարձակ սահմաններ է բաց ա-
նում կրօնական համբերողութեան համար
Ռուսաստանում:

Կրօնը հանդիսանում է իր նախնի բացա-
ռելի վիճակից և դառնում է ազատ ըն-
տրութեան առարկայ, ազատ դաւանանքի
հասկացողութիւն: Առաջ կրօնը կամ ար-
տօնակ վիճակի մէջ էր, ինչպէս, օրինակ,
պրալօյալիին, կամ որոշ սահմանափա-
կութիւններ էր ենթարկված, ինչպէս միւս
կրօնները: Այժմ կրօններին տրվում է
իրաւական հաւասարութիւն: Եւ իւրա-
քանչիւր անձ կարող է իր կամքով ընտ-
րել իր ցանկացած կրօնը առանց որ և
է արգելքի:

Ինչպէս յայտնի է, կրօնական խտրու-
թիւնները գործնական շատ դժուարու-
թիւններ են յարուցել մեր առօրեայ
կեանքում: Օտարադաւանների միմեանց
հետ պատկանելու, դաւանների միտու-
թեան, պաշտօններ ստանալու ժամանակ
և ուրիշ զգալիքներում կրօնը շատ անգամ
արգելադրւթ դեր է կատարել կեանքի
գործերի մէջ: Այժմ մի անգամից վերջ է
դրվում այդ բոլոր անարդարութիւն-
ներին: Ով իրան ընտանեակում է գտնու-
կարող է վերադառնալ այն կրօնին, որից
նա որ և է պատճառով հեռացել է և
ընտրել այն կրօնը, որ նա աւելի համա-
պատասխան է համարում իր համոզմունք-
ներին և հայեացքներին:

Նոր օրէնքի հրապարակումը կրօնափոխու-
թեան մէջ չէ: Կրօնափոխութիւնը ինքն
ըստ ինքեան այնպիսի մի պատճառ է
ներկայումս, որ նա կարող լինէր առան-
ձին նպատակով: Ոչ, նրա գլխաւոր ի-
մաստը դաւանամբի ազատութեան, խղճի
ազատութեան գաղափարի մէջն է: Մար-
դիկ պէտք է ազատութիւն ունենան դա-
ւանելու այս կամ այն կրօնը և պատժի

ու արգելքի չը հանդիպեն, երբ նրանք
իրանց բարի կամքով և հայեացքով դե-
րապատեն այս կամ այն կրօնը թէ իրանց
և թէ իրանց զաւակներին համար:

Նոր օրէնքով կրօնը գրաւէ պէտք է
լինի իր էութեամբ, իր բովանդակու-
թեամբ, մի խօսքով ինքն իրանով և ոչ
ոստիկանական թելադրութիւններով:

Կրօնական համբերողութեան նոր օ-
րէնքը մեծ ուրախութեամբ ընդունվել է
ուսու ազանդաւորներին կողմից, որոնք
մինչև այժմ սահմանափակված իրաւունք-
ներ ունէին: Նա անշուշտ մեծ ուրախու-
թիւն կը պատճառէ և Ռուսաստանի
մէջ եղող զանազան դաւանութիւններին
պատկանող համայնքներին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՐՆԵՐԻ ԿԵՏԵՐԸ

«Մշակի» անցեալ համարում մենք խոստա-
ցանք ծանօթացնել մեր ընթերցողներին այն
որոշումների հետ, որ կայացել և մշակել
էին Անդրկովկասի ըստնաչորս հայաբնակ կենտ-
րոնների կողմից Թիֆլիսում հաւաքված ներ-
կայացուցիչները:

Վրացիների, մահմեդականների, քաղաքային
դաւանների, Գիւղատնտեսական ընկերութեան
և զանազան հիմնարկութիւններին որոշումները
մանրամասն լոյս են տեսել լրագրներում:
Այժմ հայկական որոշումների հրատարակու-
թեամբ լրանում է մի պակաս, որի բացակա-
յութիւնը խանգարում էր մեր երկրի զանա-
զան մասերի կարիքներին և պահանջներին
պատկանող ամբողջացնելու համար: Այդ որո-
շումներին կցված է և մի առաջադրանք, որի
հետ կը ծանօթացնենք մեր ընթերցողներին
առաջիկայ համարներից մէկում:

1) Մտցնել Անդրկովկասում տեղական ան-
դաւանաւոր ինքնավարութիւն լայն հիմունք-
ներով, հիմնելով ա.) ինքնավար մանր գեմա-
ւային միութիւն, բ.) գաւառական (առանց
նահանգականի) գեմաւոր, առանձնացնելով
քաղաքային ինքնավարութիւնները իբրեւ ա-
ռանձին միութիւններ և գ.) մէկ Համաանդը-
կովկասեան գեմաւորային ժողով, որը իրաւունք
պիտի ունենայ օրէնքներ առաջարկելու և
նախօրոք քննելու Անդրկովկասի վերաբերեալ
բոլոր օրէնսդրութիւնները:

2) Մտցնել երկուեաների դատարան ընդ-
հանուր դատաստութեան (общей подсудности)
բոլոր գործերի համար, նոյն թիւում նաև քա-
ղաքական, կրօնական, պաշտօնավարական և

մամուլի գործերի համար. մտցնել նոյնպէս
ընտրեալ հաշտարար դատաւորների հաստա-
տութիւնը: Թոյլ տալ դատավարութիւնը հաշ-
տարար դատաստանական հիմնարկութիւնների
մէջ տեղական լեզուներով: Պարտադիր անել,
որ հայաշատ տեղերում դատաւորները և դա-
տաստանական քննիչները գիտենան հայերէն
լեզուն:

3) Ոչնչացնել դատակարգային առանձնա-
շնորհներ: Հաւասարեցնել կանանց և տղա-
մարդկանց իրաւունքները:

4) Ազատութիւն խօսքի, ժողովների, համա-
խմբումների, ստաշկանների և ընկերակցութիւն-
ների: Կարգադրել, որ մարդասիրական, քաղա-
քակրթական, հրատարակչական և ուրիշ կըր-
թական հաստատութիւնները, որպէս և պար-
բերական հրատարակութիւնները հիմնվին և
բացվին յայտարարական (явочный) ձա-
նարով: Ազատել տեղական լեզուներով հրա-
տարակվող ամեն տեսակ աշխատութիւնները
գրաքննութիւնից և պատասխանատու անել
մամուլը բացառապէս դատաստանի առաջ:

5) Լեզուի ազատութիւն ժողովներում:
Գործավարութիւն գիւղական հաստատու-
թիւնների մէջ, նաև գիւղական հասարակու-
թիւնների փոխադարձ յարաբերութիւնների
մէջ տեղական լեզուով:

6) Անձնաւորութեան և ընտանեական հիմունք-
միութիւն: Ոչնչացնել անցաթղթերի սիս-
տէմը, իսկ իսկական սահմանների մէջ: Վե-
րացիներ վարչական պատժներին ու տուգանք-
ները և ռէնչացիներ ռեժիսորներ իրաւունքները:
Վերացիներ 1898 թ. հրատարակված ոստիկա-
նական գեմաւորային պահապանների օրէնքը,
հիմնել նոր գեմաւորային ոստիկանութիւն և
ենթարկել այս ոստիկանութիւնը գեմաւորային-
րին, իսկ քաղաքային ոստիկանութիւնը՝ քա-
ղաքներին:

7) Ընդհանուր պարտադիր խմբի տարրական
ուսում: Լիակատար ազատութիւն տալ մաս-
նաւոր նախաձեռնութեանը բանալու յայտա-
րարական ծանապարհով ամեն տեսակի և ա-
մեն կարգի ուսումնաւարաններ և դպրոցական
հաստատութիւններ: Մասնակից անել հասա-
րակական ոյժերը պետական և միջնակարգ և
ստորին դպրոցների կառավարութեան գոր-
ծին: Բանալ համալսարան Թիֆլիսում երկու
սեռի անձանց համար կովկասագիտութեան և
տեղական լեզուների ամբիոններով, նաև բա-
նալ բարձրագոյն մասնագիտական դպրոցներ
Անդրկովկասում:

8) Պարտադիր անել, որ տարրական դըպ-
րոցներում դասաւանդութիւնը հայ ծագում
ունեցող մանուկներին համար լինի հայերէն,
աւանդելով և ուսուցիչներ, որպէս գլխաւոր
աւարականից մէկը: Լուրջ հիմունքների վրա
գնել հայոց կրօնի, հայոց լեզուի, գրականու-
թեան և պատմութեան ուսուցումը պետական
դպրոցներում, ուրիշ գլխաւոր առարկաների
հետ հաւասար սկզբունքներով:

9) Խղճի ազատութիւն: Վերացիներ բոլոր
դաւանական և կրօնական սահմանափակում-
ները: Ազատութիւն տալ երդուելու մայրենի
լեզուով բոլոր պետական և հասարակական
հաստատութիւններին մէջ:

10) Վերականգնել ինքնավար հայկական ե-
կեղեցու իրաւունքները, վերացնելով բոլոր
սահմանափակումներն ու խոչընդոտները, մա-
նաւանդ ա) հայոց եկեղեցու կալուածքները,
կուլտուրական-կրթական և բարեգործական
հաստատութիւնները կառավարելու գործում,
բ) ս. Նշմիւրածնի սինօդի անդամների, Թեմա-
կան առաջնորդների, յովորդների և ուրիշ հո-
գևոր վարչական պաշտօնեաների համայնական
ընտրութեան գործում, և գ) թէ ուսանողական
թեմերի և թէ ամենայն հայոց Հոգևոր-ազգա-
յին ժողովները պարբերաբար գումարելու
գործում:

11) Վերադարձնել Հայկական եկեղեցուն
նրա ծխական դպրոցները և կալուածքները,
վերացնելով 1884-ից մինչև 1903 թ.թ. բոլոր
օրէնքներն ու կարգադրութիւնները, որոնք
վերաբերում են թէ ծխական դպրոցներին և թէ

այդ դպրոցների և հայոց վանքերի, եկե-
ղեցիների և հոգևոր դպրանոցների կալուածք-
ներին:

12) Հիմնել Կովկասում հայ-կաթօլիկական
թեմ թեմական առաջնորդով, հայազգի և հայ-
կաթօլիկ եպիսկոպոսով:

13) Մտցնել պրօգրեսիվ եկամտային հար-
կատուութիւն, որչափանցելով առաջնակարգ
անհրաժեշտ իրերից առնվող անուղղակի
հարկերը:

14) Բարեբեկ բանւորական աշխատանքի
պայմանները, կանոնաւորելով օրէնսդրական
ծանապարհով բանւորական օրաժամը և վե-
րացնելով բանւորական միութիւնները ու ըն-
կերակցութիւնները կազմակերպութեանը խան-
գարող սահմանափակումները:

15) Պարտադիր անել, որ միւլթաբարական
և ժամանակաւորապէս—պարտաւորված (вре-
менно—сбытаемые) գիւղացիներին հողաբաժին-
ները (наделъ) յետ գնվին ամբողջ համայնք-
ների կողմից գանձարանի աջակցութեամբ,
Ռուսաստանի ներքին նահանգների հետ համա-
հաւասար հիմունքներով: Աջակցել որ գիւղական
հասարակութիւնները կարողանան յետ գնել
իրանց հողաբաժիններից դուրս գտնվող այն
մասնաւոր կալուածատիրական հողերը, որոն-
ցից նրանք զարուհակ օգտվում են, և պար-
տաւորեցնել, որ գիւղացիական բանկը տայ
նրանց այդ նպատակի համար փոխառու-
թիւններ:

16) Թոյլ տալ մասնաւոր վարկային (կրեդի-
տային) հաստատութիւններին գործողութիւն-
ներ անել գիւղացիական հողերի յետգնման
վերաբերեալ:

17) Նախադաս (преимущественное) իրա-
ւունք տալ տեղական սակաւահող և անհող
գիւղացիներին ընակելու ազատ արքունի
հողերի վրա Անդրկովկասի սահմաններում:
Դիւրութիւններ տալ գիւղական ազգաբնա-
կութեան օգտվելու անտառներից, դաշտակ-
ներից (թալաններից) և արօտատեղիներից:

18) Վերացնել ուսաց հպատակութիւնը
ընդունած թիւրքահայ գաղթականներին վե-
րաբերեալ սահմանափակիչ և բացառիկ օրէնա-
դրութիւններն ու կառավարչական կարգա-
դրութիւնները և տալ նրանց ուրիշ հպատակ-
ների հետ հաւասար իրաւունք հողաբաժիններ
ստանալու Անդրկովկասի սահմաններում:

19) Հայ գիւղերի ծառայելու խաղաղ
ժամանակ Կովկասի սահմաններում:

20) Վերադարձնել վարչական իշխանութեամբ
աքսորված հայերին և ներում շնորհել քաղա-
քական և կրօնական գործերի համար տուժող
բոլոր անձերին:

Այս բոլոր բարեփոխումները իրագործելու
համար անհրաժեշտ է հրաւիրել համառոտական
ներկայացուցչական ժողով ընդհանուր, հաւա-
սար, ուղղակի և գաղտնի ձայնաւորութեան
սկզբունքներով, տալով հայ ժողովրդին իրա-
ւունք մասնակցելու այդ ժողովին Ռուսաս-
տանի ներքին նահանգների հետ համահաւասար
հիմունքներով:

ԲԱԳՈՒԻ ՔԱՂԱՔԱԳՆՈՒՄԻ ԻՐԵՅԿԻՆ ԵՒ ՓԵՏԸՐ-
ՎԱՐՆԱՆ ԿՈՏՈՐԱՅԸ

Ի՞նչ դիրք էր ընդնի Բագուի պ. քաղաքա-
պետը այն սարսափելի օրերում, երբ քա-
ղաքը դարձել էր մարդկային սպանդանոց:
Այդ բանը ամենից լաւ կարող էին իմանալ
նրա ձեռքի տակ գտնվողները, այսինքն այն
մարդիկ, որոնք ծառայում են Բագուի քաղա-
քային վարչութեան մէջ: Եւ զրանք պաշտօ-
նական արձանագրութեան մէջ մի առ մի
պարզել են պ. Իրեցկիի վերաբերմունքը դե-
պի փետրվարեան սարսափները: Այդ արձա-
նագրութիւնը տպված է «Сынъ Отечества»
լրագրի մէջ: Անա նա.

«Բագուի հասարակական վարչութեան ծա-
ռայողները հաւաքվելով փետրվարի 14-ին՝
խորհրդակցելու փետրվարի 6—9-ի արիւնա-
նեղ դէպքերի մասին, կանգ առան այն հարցի
վրա, թէ ի՞նչ միջոցներ ձեռք առաւ Բագուի

քաղաքային վարչութիւնը սոսկալի կոտորածը դադարեցնելու և նրա դժբախտ զոհերի վիճակը թեթեւացնելու համար: Ժողովին գեղացիներին փաստեր, որոնք անհերքելի կերպով ապացուցանում են Բագուի քաղաքային վարչութեան ամենակատարեալ անգործութիւնը այդ ուղղութեամբ: Պարզվեց նոյնպէս, որ Ուլարավայի մէջ ծառայող հայերը, թուով 46 հոգի, մնացել էին քաղաքային տանը պաշարված դրութեան մէջ, բայց Բագուի սարսափներէ ամբողջ տեղաբնակչութեան ժամանակ չունէին ուտելու բան, և եթէ չը լինէին մի քանի ընկեր ուսանիք, որոնք անձնազոհութեամբ, մեծ վտանգի ենթարկելով իրանց կեանքը գնդակների կարկուտի տակ, քաջութեամբ ունեցան մի քիչ հաց հասցնել պաշարվածներին, այս վերջինները կը մեռնէին սովից: Պաշարվածներին ամեն րօպէ սպառնում էր վտանգ գազանացած ամբոխի կողմից, որ սպառնում էր ներս խուժել քաղաքային տունը և կոտորել հայերին, որովհետեւ սրանք թողնված էին ճակատագրի կամայականութեան, առանց որ և է պաշտպանութեան: Մարտիկը խելագարված պաշարվածները յուսահատութեամբ վազեցին դէպի տէլէֆօնը, խնդրելով քաղաքապետից օգնութիւն, բայց քաղաքապետը կամ հրաժարվում էր խօսել նրանց հետ, կամ համոզում էր նրանց դուրս գալ քաղաքային տնից և գնալ իրանց տները, որովհետեւ փողոցներում ամեն ինչ լաղաղ է և ոչ ոք նրանց չի դիպչի: «Հօ ես ման եմ գալիս դրսում, ինձ չեն սպանում», ասում էր նա իրան դիմող ծառայողներին: Երբ նրան նկատեցին թէ կայ տարբերութիւն իրանց և քաղաքապետի մէջ, որը, բացի քաղաքապետի լինելուց, քաղաքի մէջ շրջում է նահանգապետի հետ, բազմաթիւ կողմերի ուղեկցութեամբ, որոնք ոչինչ չեն անում անպաշտպան ժողովրդի համար, բայց լաւ պաշտպանում են նահանգապետի և քաղաքապետի ապահովութիւնը, պ. Իրեցիկ պատասխանեց թէ նրանք «չափազանցում են»: Եւ այս բոլորը տեղի ունէր այն ժամանակ, երբ քաղաքային տան մէջ մնացածներէ աչքի առաջ ամեն րօպէ սպանում էին անցողիկներին, երբ բերդի պարիսպի վրա շարքերով տեղադրված էին զինված լիակազմ զորքեր, որոնք ահաբեկում էին Նիկոլանիսկայա փողոցով անցողիկներին: Քաղաքապետը, եթէ միայն դուրս էր գալիս այդ ծանր օրերը տանից, չէր կարող չիմանալ, որ եթէ անպաշտպան հայ ծառայողները դուրս գային իրանց դարանից, նրանց սպանում էր անխուսափելի մահը:

Ժողովը միաձայն որոշեց առանձնացնել պ. Իրեցիկին Ուլարավայի կազմից և կանգ առաւ նրա գործունէութեան վրա, պատճառաբանելով այդ բանը հետեւեալ նկատումներով. ա)

պ. Իրեցիկ, ինչպէս լաւ յայտնի է իւրաքանչիւր ծառայողի, քաղաքապետի պաշտօնի մէջ մտնելու համարեա առաջին օրից, ոչնչացրեց Ուլարավայի իւրեւ կօլիզելով մի հիմնարկութիւն, և իր ձայնով վճռում է հարցերը, մասնաւորապէս դրամականները. բ) Ուլարավայի անդամներից երկուսը, Յարութիւնեան և Մակեդոնսկի, իւրեւ հայեր, չէին կարող օգտակար լինել ներկայ դէպքում, իսկ պ. Բեկեւսկի, ինչպէս պարզվեց ժողովում, օգտակար մասնակցութեամբ ազգաբնակչութեան մէջ իր ունեցած հեղինակութիւնից, պատասխարում էր կարօտաւորներին և նրաթական օգնութիւն էր հասցնում Ուլարավայի մի քանի ծառայողներին, որոնք այս ստրատիկայի օրերում զինված էին նրան, տոմսակներ ուղարկելով քաղաքապետականներին միջոցով և գ) պ. Իրեցիկ, ինչպէս մինչև հայտնութիւնը, նոյնպէս և հայտնութեան հետեւած օրերում, ուղղակի անկարելի կերպով էր վարվում ծառայողների հետ, վերաբերելով և հայոցիւրով ամենքին և մասնաւորապէս նրանց, որոնք զինված էին նրան խնդրելով գոնէ ուժեղի մի մասը և ուղարկութիւն չէր դարձնում նոյն իսկ այն բանի վրա, որ Ուլարավայի ծառայողները առանց այդ էլ ամբողջ երկուսն անգամ են ուժեղ ստանում:

Մարտիկի տեղի օրերում ներկայի լաւութեամբ հասնում էր այն աստիճանին, որ հէնց որ յայտնի դարձաւ թէ հայտնութիւն է կայացել, հէնց որ վերջացան զենքի պայթիւնները, մարդիկ թողնում էին իրանց աշխատանքով ձեռք բերած կայքերը և շտապում էին դուրս գնալ արեւմտ քաղաքից, որի փողոցներում նրանք տեսել էին արեւմտ առուներ և մարդկանց դիակներ: Մարդիկ բնականաբար ուզում էին զէթ մի րօպէ աչք հեռացնել Բագուի սարսափներից և հանգստութիւն էին որոնում Բագուից հեռու մի օր և է տեղ: Այսպիսի դրութիւն վիճակից և քաղաքային ինքնակարգութեան ծառայողներին, և ինչպէս դարձանալու բան է, որ նրանք մի այդպիսի դժուար րօպէին դիմեցին քաղաքային կասային, ուր ընկած էին նրանց կիսամանա աշխատանքով վատասկած փողերը: Ինչպէս ընդունեց նրանց իրեցիկը Նա ուղղակի սկսեց հեզնել նրանց: «Դուք չափազանցում էք, շատ կաշաղակներ էք, առիթ էք գտել և չթշնջւում էք»:

Երբ մի քանի ծառայողներ դիմեցին նրան խնդրելով մի ամսիկ ուժեղ, պատճառ բերելով թէ հարկադրված են ուղարկել իրանց ընտանիքները քաղաքից դուրս քաղաքից համար, պ. Իրեցիկ պատասխանեց նրանց. «Դուք կնիկ էք, գնացէ՛ք ձեր վախճանութեան վրա հեծած»: Հայտնութեան միւս օրը պ. Իրեցիկ հայոցիւրով էր ծառայողներին այն պատճառով, որ նրանք ուշ են եկել ծառայութեան, թէև

չէր կարող չը նկատել, որ ամենքը մինչև արտաքինը քաղաքային էին տեղի ունեցած դէպքերից և մասնաւորապէս պատճառով, որ շատերը գրկվել էին ազգականներից, բարեկամներից, ծանօթներից: Իսկ իւրեւ այս բոլորի մասնաւորութիւն հէնց այն հաշտակական մասնում, ուր զլխաւորապէս խօսում էր պ. Իրեցիկ, համարեա թէ անզգայ դրութեան մէջ ընկած էր Ուլարավայի ծառայող Սեմեով, որի աչքի առաջ մտնել էին նրա հարազատ հօրը և վերաւորել էին պառաւ օրը, իսկ ինքը մի ինչ-որ հրաշքով էր ազատվել սպանողների ձեռքից:

Երբ քաղաքային տան մէջ պաշարվածները, չը կարողանալով իմանալ թէ ինչ են եղել իրանց կայքը և ազգականները, կոտորածը վերջանալուց յետոյ միւս օրը դիմեցին քաղաքապետին թոյլ տալ չալխաւոր, որովհետեւ դեռ լաւ չեն իմանում թէ ինչ է պատահել, նա պատասխանեց. «Դուք միայն թրեւ գալ էք ուղում: Թրե՛ք, թրե՛ք եկէ՛ք»:

Ի նկատի ունենալով այս բոլորը, Բագուի քաղաքային ինքնակարգութեան ծառայողներին ժողովը միաձայն վճռեց, յայտնել քաղաքապետին պ. Իրեցիկին իրանց խորին վրդովմունքը և այս բոլորը յայտնել Դուլային և հասարակութեան մամուլի միջոցով:

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱՇՏՈՒԹԻՒՆ

(Գաւառական ներկայացումներ. Բարեկարգարների կօնցերալ. Ներկայացումներ Սէքսանդրօպոլում. Եւսթօրսկո ներկայացումները)

I

Թիֆլիսի հայ դերասաններից կազմված մի խումբ ճանապարհ ընկաւ Երևան թէ այնտեղ և թէ գաւառական մի քանի կենտրոններում ներկայացումներ տալու նպատակով: Մուտքը իր ընդհանուր մէջ տեղ է տուել գլխաւորապէս ինքնուրոյն և նոր պիեսներին: Նրանց թուում են Շիրվանզադէի, Թառայանի, Փափագեանի պիեսները և մի քանի թարգմանութիւններ:

Երգիչ Բարեկարգարների կօնցերալը, որ պէտք է տեղի ունենար երէկ, ապրիլի 21-ին, յետաձգել է ջութակահար Վասիլիի հիւանդութեան պատճառով մինչև առաջիկայ երեքշաբթի, ապրիլի 26-ը: Այդ կօնցերալում բացի Բարեկարգարներից կը մասնակցեն երգչուհի Մելիք-Բաթթանեան, որ կերպէ Զայիօվսկու և Եկաթեանի հեղինակութիւններից, ջութակահարներ Վասիլիի, Մառիօվսկի, բացի այդ Կօրիձէ կը կարգայ մի քանի ոտանաւորներ: Հայկական երգերից մէկը՝ «Հայրիկ-Հայրիկ», ներգաղթական է երաժշտական դպրոցի վերատեսուչ Ն. Նիկոլանի: Կոնցերտում կերպի ի Եկաթեանի «Մայրիւնան վարդ» օպերայից մի կտոր:

Սէքսանդրօպոլից, ինչպէս մեզ հաղորդում են, որ շարունակվում են դերասան Սեմեովի ներկայացումները: Սեմեովի ներկայացումները, որ այս տարվայ յունիստ ամսից ի վեր տալիս էր այնտեղ մի շարք ներկայացումներ, օգտակար և հասարակութեան համակրանքից, որոշել է մնալ Սէքսանդրօպոլում մինչև օգոստոս ամիսը, շարունակելով մի շարք մատչելի գնորով կանոնաւոր ներկայացումներ տալ «Ժողովրդական տանը», մասնակցութեամբ տեղական սիրողներից պատրաստված նորակազմ խմբի: Բէպտոուարի մէջ կան և գաւառական բնակիչ համար նորութիւն կազմող հետեւալ լուրջ պիեսները. «Դոկտոր Շտոկման կամ ժողովրդի թշնամին» և «Հասարակութեան նեղուկները» Հ. Իրաչեի, «Բարեկամներ» և «Անագիւն չին ծնվում» Զ. Բովետի, «Սերիուլի Բալետներ» Մակե Նորդաուի, «Ոճիւր և պատիժ» Դոստօվսկու, «Դժբաղդ սէր» Զիլիօզալի, «Հարստ» Բիլիս և Կարբէի, «Ազգաներ» Հ. Բէկի (այս չորս պիեսները առաջին անգամ են տրվում հայկական բեմի վրա), «Պատուի համար» Շիրվանզադէի, «Արշալոյս» Ս. Թառայանի, «Պաշտպանը» Տիմկօվսկու, «Թուգան» Մուրացանի, «Նոր աշխարհ» և այլն:

II

Երկուշաբթի, ապրիլի 18-ին, Թիֆլիսի Արտիստական ընկերութեան թատրոնում սկսվեցին դերասանների տիկին Եւսթօրսկո ներկայացումները:

Եւսթօրսկոյա յայտնի է թիֆլիսցիներին իր նախկին ներկայացումներով: Նա երկու անգամ եղել է Թիֆլիսում և այժմ նա երրորդ անգամ է մեղանում: Նրա բեպտոուարի մէջ, բացի նախկին մի երկու պիեսներից բոլորը նոր են: Դերասանական խմբի մէջ նոր աչքի ընկնող ուժ պէտք է համարել կայսերական թատրոնների դերասան Գօբելին:

Առաջին ներկայացման համար տրվեց Զուգերմանի «Հայրական տուն» պիեսը, որի բովանդակութիւնը շատ լաւ յայտնի է մեր ընթերցողին:

Եւսթօրսկոյա պիեսի գլխաւոր հերոսուհու Մագդալի դերում լուսաբանեց այդ անձնաւորութեան մի քանի գծերը նոր արտայայտութիւններով: Նրա Մագդալի մէջ շատ ուժեղ կերպով ընդգծված է անհատի ազատութեան պահանջը, որի առաջ նստմանում են Մագդալի անձնական սէրը և ընտանեկան պարտաւորութիւնները: Եւսթօրսկո Մագդալի տանջվող է, բայց նրա տանջանքը սարսափելի է այն պատճառով, որ նա ազատութեան իր պահանջներից չէ ցանկանում ոչ մի դիմում անել ընտանեկան նկատումների համար, համարելով այդ դիմումը անկարելի, նա իր սխալը և բանակցութիւններ սկսել դերասանական կառավարութեան հետ, յայտաբերելով, որ անգլօ-ֆրանսիական-սպանիական համաձայնութիւնը Մարոկոյի վերաբերմամբ ոչ մի կերպով չէ կարող և նպատակ չունի: Եւսթօրսկոյա Գերմանիայի առեւտրական շահերին: Այդ յայտարարութիւնը գոհացում առեց դերասանական հասարակական կարծիքին. սակայն խորիմ Վիլհելմը արամադել էր դեռ շարունակել իր յօխորտանքը, բայց ստիպվեց չափաւորել իր անդուստ և խաւաւսէր եռանդը, երբ տեսաւ, որ իւրեւ պատասխան իր սկսած արշաւանքին, Անգլիայի թագաւոր Էդուարդ VII-ը սկսեց մի ճանապարհորդութիւն կատարել Ֆրանսիայում, կամենալով դրանով ցոյց տալ, որ Անգլիան միայնակ չի թողնել Ֆրանսիային:

Վիլհելմ, «der reise Kaiser»-ը ստիպվեց իրան գործացած համարել և պատերազմի չարագուշակ ձեւաղը անհետացաւ քաղաքական հօբիդօնից:

Այս րօպէիս, երբ դրում եմ այս տողերը Exelsior հիւրանոցի ընթերցարանում, փողոցից լսվում են աղմկալի ցոյցեր, ոգևորված աղաղակներ. վաղում եմ պատշգամբը և տեսնում եմ, որ անգլիական թագաւորն ու թագուհին, որոնք երէկ եկել են Ալժիր, պոռոյս են անում քաղաքի փողոցներում և այցելում են Ալժիրի հոգաւորներ վարքերը: Բոլոր փողոցները, տները, շինութիւնները զարդարված են ֆրանսիական և անգլիական դրօշակներով ու զինանշաններով:

Բայց այդ մասին յետոյ:

Դառնանք իմ ճանապարհորդութեան թիւին: Մի դարձանք, եթէ իմ ճանապարհորդական ակնարկները կցկատուր և անխառն ձեւ լինեն, չէ՞ որ ուղևորի տպաւորութիւնները թուղիկ, վայրկեանական ու փոփոխական են

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Ն Ա Ս Մ Ա Կ Ն Ե Ր Ա Ն Ժ Ր Ի Բ

I
Ալժիր, ապրիլի 5/18-ին

Ես ինքս էլ չեմ հաւատում, որ յանկարծ Թիֆլիսից ընկայ Ալժիրիկա, նրա հիւսիսային մասի ամենածաղկած և ամենաբեկեղեղեղ երկրներից միւրը—Ալժիր:

Երէկ, ապրիլի 16-ին, «Անդրատլանտեան շոգենավային ընկերութեան» մի հսկայ շոգենավով Մարսէյից 26 ժամում հասայ Ալժիրի իսկի մայրաքաղաք Ալժիր քաղաքը:

Թիֆլիսից մեկնելով մարտի 17/30-ին, ես կանգ առայ 3 օր Բոստօլում, ապա 4 օր Բերլինում և 2 օր ևս Պարիզում, ուրեմն դուրս գալով այդ 9 օրը, ես Թիֆլիսից Ալժիր հասնելու համար ճանապարհորդեցի 8 օր:

Բերլին հասայ թէ չէ, իմացալ քաղաքական հօբիդօնի վրա տեղի ունեցած նոր փոփոխութիւնը—խելալ Վիլհելմ կայսրի արշաւանքը Մարոկոյ, որ այնքան զբոսեց Ֆրանսիայի շօվիտիստ և նացիօնալիստ մամուլին ու առիթ տուեց նրան քրվանջ պահանջել: Մի րօպէ երկու կար և այդ երկուսը շատ սաստիկ էր ու բաւական հիմնաւոր, որ մենք հանդիսատես կարող ենք լինել մի նոր աղետալի պատերազմի և այս անգամ Եւրօպայի երկու ամենաքաղաքակիրթ երկրները—Գերմանիայի և Ֆրանսիայի մէջ, բայց պէտք է երախտագէտ լինել Ֆրանսիայի արդէ ամենալաւ քաղաքական գործիչներին—Ժօրէսին, Պրէսանսէին և նրանց ընկերներին, որ կարողացան ժամանակին զգացնել տալ Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Դիկաւսէին իր գործած ամենամեծ քաղաքական սխալը և ստիպել նրան

ուղղել այդ սխալը ու անխուսափելի ընդհարման առաջն առնել: Որքան էլ Վիլհելմ կայսրի ընտան քաղաք ֆանֆարօնական ընաւորութիւն էր կրում, որքան էլ նա իր այդ քայլով կամեցաւ ձեռնդ շնորհ Ֆրանսիային և մենամարտի հրաւերել, երկուսը չը կրելով նոյն իսկ Անգլիայի աջակցութիւնից Ֆրանսիային, բայց թէ անգլիական և թէ ֆրանսիական մամուլը լաւագոյն օրգաններէ կարծեթով, ֆրանսիական կառավարութիւնը իր գործած մի մեծ սխալով, որ նախադիմ էր ուղղակի Գերմանիայի հասցէին, առիթ էր տուել Վիլհելմին այդ քայլն անել:

Ֆրանսիան կարեւոր շահեր ունի Մարոկոյում, գլխաւորապէս անտեսական, ի նկատի ունենալով, որ այդ երկրը սահմանակից է Ալժիրին: Այդ Մարոկոյին, որ կառավարվում է մի սուլթանի կամ մանգաֆի ձեռքով, նոյնպիսի թշուառ վիճակի մէջ է, ինչպէս Թիւրքիան: Նրա այդ անբարեկարգ վիճակից զնայվում է Ֆրանսիան, զնայվում են և այն պետութիւնները, որոնք առեւտուր ունեն Մարոկոյի հետ, այն է Անգլիան, Սպանիան, Իտալիան և Գերմանիան: Ֆրանսիային կառավարութիւնը, Մարոկոյում ընթացիկ մտցնել տալու համար, մի համաձայնութիւն է կայացնում Անգլիայի և Սպանիայի հետ. այդ համաձայնութիւնով նա պաշտօնապէս հաղորդում է Իտալիային, Ռուսաստանին, Աւստրիային, բայց ոչ Գերմանիային, մինչև դիւանագիտական տակտը պահանջում էր Գերմանիային և հաղորդել պաշտօնապէս, այսինքն համաձայնապէս պատճէնի հաղորդմամբ, և ոչ մասնաւոր խօսակցութեան ժամանակ, բերանացի, ի թիւս այլոց և պատահաբար, յայտնել, ինչպէս արել էր Դիկաւսէն, գերմանական դեսպան իշխան Բալօլինի հետ ունեցած մի մասնաւոր և պատահական խօսակցութեան ժամանակ:

Բնականաբար, գերմանական կառավարութիւնը զգաց այդ վերաւորանքը և Վիլհելմ կայսրը, որին իր ժողովուրդը անուանում է der reise-Kaiser (ճանապարհորդ կայսր), մինչև օրը, հանգուցեալ Ֆրիդրիխին անուանում է der Weise Kaiser (իմաստուն կայսր): Այդ վերաւորանքին պատասխանելու համար հարկաւոր համարեց, reisen, ճանապարհորդել և ի լուր աշխարհի յայտարարել, թէ նա թոյլ չի տայ, որ Մարոկոյի սուլթանական վիսայետութեան հարուած հասցնեն, թոյլ չի տալ, որ մուսուլման երկրում եւրօպական ընթացիկներ մտցնեն:

Քօսը չը կայ, որ Վիլհելմը, այդպիսի խօսքեր արտասանելով, չը վրդովեց իւրեւ իմաստուն կայսր և մի նաեւամ ևս ցոյց տուեց իր ընտանութեան հակակրեղի կողմը և դէպի ասիական կամ թիւրքական—սուլթանական կարգերը ունեցած իր ձգտումները, բայց դատապարտելով հանդերձ նրա այդ հակակրեղի ձգտումները, գերմանական ազգը և նոյն իսկ առաջադիմական մամուլը ստիպված էին պաշտպանել կայսրի բողոքը՝ Գերմանիային հասցած վերաւորանքի դէմ: Գերմանիան պահանջում է, որ Մարոկոյի գոյնը բաց լինեն Գերմանիայի առաջ, ինչպէս բաց են Ֆրանսիայի, Անգլիայի, Իտալիայի առաջ, ուրիշ ոչինչ: Նրա այս արդարացի պահանջը չէր կարելի չընդունել, ուստի և ֆրանսիական մամուլը առաջադէմ և բուն հայրենասէր մասը, որ հայրենիքի և մարդկութեան շահերի համար աղետալի է համարում պատերազմը, սկսեց յանդիմանել Դիկաւսէին իր գործած անեղիկ սխալի համար և պահանջեց, որ նա Գերմանիայի վերաբերմամբ նոյն տակտը և վարմունքը ունենայ, ինչ որ ունեցել էր Իտալիայի, Ռուսաստանի և Աւստրիայի վերաբերմամբ: Դիկաւսէն ստիպվեց խոստովա-

անթոյաւորելի մի յանցանք: Եւ յորոշակեալ խաղում էր մեծ տաղանդով և արժանացաւ բուռն ծափահարութիւններին:

Գործի՝ ծերունի Շվարցի դերում շատ բնորոշ և ամբողջացրած մի տիպ էր: Խաղը խելացի, շարժումները և խօսքերը բնական, ամբողջ դերը թափանցիկ ընտանեկան պատուի գաղափարի և դասակարգային հասկացողութիւնների որոշ դրոշմով: Տիպի մշակութեան մէջ փոքր ինչ պակասում է խորութիւն: Այդո՞ղ էին նեվերոսով՝ պատուի դերում, Լիլիցիկայ Մարիայի դերում, Բելգորոսկիյ, ֆօն Կիլերի դերում:

Հետեւեալ օրը, երեքշաբթի, ապրիլի 19-ին, ներկայացվեց իշխան Բարեատիսկու «Меркаты» պիեսը, որ մինչև այժմ արդիւնք էր Ռուսաստանի բեմերի վրա: Պիեսը շօշուփում է գաւառական պաշտօնեաների բարոյական ընդունակութիւնը: Իշխանութեան ի չար գործ դնելը, կաշառքով գործեր կատարելը, զուր տեղից բազմապիսի յանցանքներ ստեղծելը դարձնում են պիեսը բարբերի ընտելեան տեսակէտով բոլորովին ժամանակակից և հետաքրքրական:

Տիկին Նալոյակեան առիթ ունէր ցոյց տալու իր դերասանական տաղանդը պիեսի գլխավոր հերոսուհու դերում: Նա ընդգծում էր Կրուչինինայի տիպի մէջ անկեղծ ձգտում դէպի բարի գործ և սուրբ վերաբերմունք դէպի հասարակական պարտաւորութիւններ, անձնութիւններին սիրած գործի և մարդկանց համար, բողոք կեղտի և անարդարութեան դէմ: Եւ յորոշակեալ մասնաւոր ուժեղ տպւորութիւն թողեց վերջին գործողութեան մէջ:

Գործի, որ կատարում էր նախագիտելի պաշտօնեայի դերը, տիպիական էր: Բելգորոսկիյ, պիեսի գլխավոր հերոս Նալոյակեան դերում ցոյց տուեց ճշմարտութիւն, դերի խելացի ըմբռնում: Տիկին Արնոլդի՝ նախագիտելի տիպի կնոջ դերը կատարեց հմտութեամբ և կարողացաւ ամբողջացնել մի հետաքրքրական տիպ: Դաժմարով խմբագրի դերում աշող էր:

Թատրոնը ծայրէ ծայր լինէր: Ներկայացուցւում է պիեսը թողեցին լաւ տպւորութիւն: Պիեսի հեղինակին մի քանի անգամ բեմ կանչեցին:

Սերոյ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» ներկայ համարը բաղկացած է 1½ թերթից:

Վեհափառ Կաթողիկոսի կողմից Պետերբուրգ գնացած հոգևոր պատգամաւորութեան անդամ Մեսրոպ վարդապետ Տէր-Մովսէսեան երէկ, ապրիլի 21-ին, հասաւ Թիֆլիս և նոյն

լինում: Բայց եւ կաշխատեմ որոշ ժամանակագրական կարգ պահպանել:

Բերլինում եւ առիթ ունեցաւ, շնորհիւ իմ քարեկամ Յովհաննէս խան Մասեհեանի՝ տեսնել արքունական դրամատիկական թատրոնում «Օթէլլօ» ներկայացումը հաջկաւոր լին դերասան Մատուչէլլու մասնակցութեամբ: Նա կատարում է Օթէլլօի դերը և համարվում է Եւրոպայում գրեթէ առաջին դերասանը, որ կարողացել է ըմբռնել Օթէլլօի իսկական տիպը և դերը:

Եւ միայն այս կարող եմ ասել, որ եթէ Շէկսպիրի Օթէլլօն այն է, ինչ որ ես տեսայ Բերլինի արքունական թատրոնի բեմի վրա, ապա ուրեմն հայ դերասանական խմբերը պէտք է հրաժարվելով հրաժարվեն Օթէլլօն ներկայացնել հայկական բեմի վրա, կամ գոնէ մեր գլխավոր դերասանները գտն մի քանի ժամանակ ուսումնասիրելու, թէ ինչպէս են հասկանում Եւրոպայում «Օթէլլօ» դրաման և ինչպէս են խաղում Օթէլլօ և Եւգօի դերերը...

Բերլինում եւ տեսայ պրօֆէսոր Լէմանին, որ բազմ օր յիշողութիւն է պահել «Մշակի» խմբագրութեան մասին և որը խօսում էր ինձ հետ գրաւոր հայերէն: Նա խնդրեց ինձ իր ողջինը և յարգանքը մատուցանել «Մշակի» խմբագրութեան անդամներին:

Պարել հասաւ Կիւնզաբեր, ապրիլի 13-ին (մարտի 31-ին), ժամը 5-ին երեկոյեան և գնածս բոլոր լրագրիները, «L'Humanité», «Le Temps», «Figaro», «La Petite Republique» և ուրիշները լի էին յօդուածներով Մարօկոյի միջնադէպի մասին:

Պատերին կպցրած աֆիշները իմացայ, որ նոյն երեկոյեան ժամը 8½-ին «Ռուս ազգի և Նրան յարակից ժողովուրդների բարեկամների ընկերութիւնը» (La société des amis du peu-

ple russe et des peuples annexés) մի հրապարակական և ձրի ժողով ունեցաւ «Դիտունական ընկերութիւններ» ակնարկով, որին նախագահում է Ֆրանսիական ինստիտուտի անդամ պ. Պէյնլեյ (Painlevé) և ճշտեցին խօսելու Ֆրանսիա դը Պրէսանէ, պրօֆէսոր Լանգուա, Պէյնլեյ, Պիէր Բիլյառ Ռուսաստանում տեղի ունեցող դէպքերի մասին:

Եւ շտապեցին գնալ այդ ժողովը և արդէն ժամը 8-ին սրահը լիւրն էր և ասեղ ձգելու տեղ չուր կար:

Ճառարարները տեսնաւ իրենց ներքին Ռուսաստանում տեղի ունեցող դէպքերը, հըրապարակված հրովարտանքների յարուցած շարժումներն ու ձգտումները և մասնաւորապէս նաեւ Բագուի դէպքերն էին: Պրէսանէ վերին աստիճանի վերին մասից արտաբերեց իր խօսքը: Պրէսանէն և թէ միւս ատենաբանները խորին համոզմունքով արտաբերեցին իր խօսքը:

«Մշակի» խմբագրութիւնը շնորհակալութիւն է յայտնում այն բոլոր անձանց, որոնք ուղարկել են մեզ շնորհաւորութիւն գտակական տօներին առիթով:

Ձատկական տօներին կարօտեալներին բաժանելու համար ստացանք պ. Պետրոսեանից 5 ռ., Եկմարեանի հոգեհանգստի ժամանակ հաւաքած 1 ռ., 70 կ., Հ. Նիկոլայեանից 5 ռ., մի տիկնոջից, որ գնալով է Ռուսաստանի խորքերում և չէ ցանկանում անունը հրատարակել, 9 ռ., պ. Գասպարեանից (Արծուանիքի գիւղացի) իր եղբոր Յովհաննէսի յիշատակին 10 ռ.: Թէ նախկին ստացած և թէ այսօր յիշատակված գումարները բաժանվեցին «Մշակի» խմբագրատանը բազմաթիւ կարօտեալներին:

Կովկասի մահմեդական ազգաբնակչութեան բոլոր ներկայացուցիչները ներկայացել են Կովկասի փոխարքային, ներքին գործերի մինիստրին և մինիստրների կոմիտէի նախագահ Վիտտէին: Ընդունելութիւնները եղել են քաղաքավարի և արտաքին: Ամեն տեղ մահմեդական ներկայացուցիչները յայտնել են իրանց ամենախոշոր պահանջը—հաւասարեցնել մահմեդականների իրաւունքները քրիստոնեաների իրաւունքներին:

Բագուի աղէտի զոհերի օգտին ստացանք, 1) Կուշկայի հայ արհեստաւորներից 50 ռ., 2) Նիկոլ-Ուսուրիյսկից Ս. Բուրադեանի միջոցով հաւաքված 85 ռ., 3) 44-րդ Կամէատսկի գնդի հայ և հրէայ զինուորներից աշտարակից Ս. Արամեանի ձեռքով հաւաքած 17 ռ., 4) Մանրեանի և ընկ. Ի. ին գործարանի մի մասը բանուորներից Փ. Փափազեանի միջոցով 16 ռ.: Ընդհանուր գումարը նախկին ստացածներին հետ միասին 27618 ռ. 90 կ.:

Ստացանք Ձխար գիւղի հրկիզեալների օգտին «Արամագը» նաւթահանքի (Բալախանի)

ple russe et des peuples annexés) մի հրապարակական և ձրի ժողով ունեցաւ «Դիտունական ընկերութիւններ» ակնարկով, որին նախագահում է Ֆրանսիական ինստիտուտի անդամ պ. Պէյնլեյ (Painlevé) և ճշտեցին խօսելու Ֆրանսիա դը Պրէսանէ, պրօֆէսոր Լանգուա, Պէյնլեյ, Պիէր Բիլյառ Ռուսաստանում տեղի ունեցող դէպքերի մասին:

Եւ շտապեցին գնալ այդ ժողովը և արդէն ժամը 8-ին սրահը լիւրն էր և ասեղ ձգելու տեղ չուր կար:

Ճառարարները տեսնաւ իրենց ներքին Ռուսաստանում տեղի ունեցող դէպքերը, հըրապարակված հրովարտանքների յարուցած շարժումներն ու ձգտումները և մասնաւորապէս նաեւ Բագուի դէպքերն էին: Պրէսանէ վերին աստիճանի վերին մասից արտաբերեց իր խօսքը: Պրէսանէն և թէ միւս ատենաբանները խորին համոզմունքով արտաբերեցին իր խօսքը:

Երկրորդ օրը, ուրբաթ, իմանալով որ արեւելագետների XIV միջազգային կոնգրէսը, որին հրաւիրված էին մասնակցելու և որի համար եկել էին Պարել, կայանալու է ապրիլի 18 (5)-ին Ալժիրում, տեղեկանալով որ Մարսէլից կոնգրէսի մասնակցներին Ալժիր տանող շոգենաւը մեկնում է այդ քաղաքից շաբաթ օր, ապ-

ժառայողներից Ն. Մարդուհանի միջոցով 34 ռ. 50 կ., 2) Նախնաօւղայա կայարանից 8 ռ. 50 կ.: Նուիրատուններն են՝ Սալախեան 3 ռ., Մուրադեան 3 ռ., Վարդանեան 1 ռ., Մուրադեան 1 ռ., Կարպեան 50 կ.: Ընդհանուր գումարը նախկին ստացածներին հետ միասին 1985 ռ. 39 կ.:

Մեզ հաղորդում են, որ վաղը, շաբաթ օր երեկոյեան Թիֆլիսի քաղաքային դումայի դահլիճում տեղի կունենայ մի մասնաւոր խորհրդակցութիւն՝ քննելու ընտրողական գործի վերաբերեալ մի շարք խնդիրներ: «Մշակի» № 71-ում մենք զետեղեցինք յատուկ նկատողութիւն, որի մէջ յիշատակեցինք այդ գործի վերաբերեալ գլխաւոր կէտերը: Խորհրդակցութեանը կարող են մասնակցել բոլոր ցանկացողները:

Ինչպէս յայտնի է, Թիֆլիսում լուր էր տարածվել, որ Թիֆլիսի նահանգապետ է նշանակվելու նոյն նահանգի վրաց ադնալականութեան պարագլուխ իշխան Դ. Չ. Միլիբովը: Այդ լուրը չարդարացաւ: Այժմ լուր է տարածվել, որ Երևանի նահանգապետ կուս Տիգրանուկէսին է առաջարկված այդ պաշտօնը, բայց նա իբր թէ մերժել է:

Թիֆլիսի նահանգապետի պաշտօնակատարի թոյլտուութեամբ Դումայի դահլիճում այսօր սկսվում են մի շարք ժողովներ, որ անելու են տեղական արհեստաւորները: Այսօր, ապրիլի 22-ին, հաւաքվելու են քարտաշները, 23-ին—հիւսնները և 25-ին—հերկարարները: Ժողովների սկիզբն է ժամը 10-ին: Նրանց նպատակն է միջոցներ մտածել բարեկեցութեւն արհեստաւորների վեճակը:

Թիֆլիսի աւստրո-ունգարական հիւպատոսը յայտարարել է տեղական լրագրիչներում, որ ներկայ ամսի 21-ից սկսած նորից պարտադիր է դառնում Աւստրո-Ունգարական պաշտոնների համար անցագրերը ստորագրութեան կամ վիզէի ներկայացնել:

Վերջին ժամանակներս Կովկասի երկաթուղիների բանուորների մէջ տեղի ունեցած բազմաթիւ գործադուլների և այլ երեւոյթների պատճառով, ասում է «ՀՈՅ.» լրագիրը, հաւորակցութեան ճանապարհների մինիստրութեան կողմից Կովկաս է գալիս մի յատուկ յանձնաժողով, որը տեղի վրա ընկնու է այդ գործադուլների ու խանդավառութիւնների պատճառները և նրանց բաւարարութիւն ապրու միջոցները:

Ստացանք հետեւալ նոր հրատարակութիւնները. 1) Զօն-Միլլէր «Նորահաս օրիորդներին

երիւ 15-ին, եւ շտապեցի երեկոյեան ժամը 7-ին Լիօնի երկաթուղիով մեկնել Մարսէլ, ուր հասաւ երկրորդ օրը, շաբաթ, ապրիլի 15-ին, առաւօտեան ժամը 9-ին և նոյն օրը «Մարեալ Բիւքս» շոգենաւով, ժամը 1-ին կէտից յետոյ մեկնեցին Ալժիր: Նաւում ինձ հետ կային և կոնգրէսի բազմաթիւ անդամներ, որոնք գալիս էին Եւրոպայի զանազան ծայրերից: Մովը սկսեց խաղաղ էր, բայց միւս օրը, կիրակի, ապրիլի 16/3-ին փոթորիկ բարձրացաւ և մենք բաւական նեղութիւնք քաշեցինք: Վերջապէս, նոյն կիրակի օրը, 26 ժամվայ նաւարկութիւնից յետոյ, մենք տեսանք Ալժիրի ափերը և ժամը 4-ին կէտից յետոյ յանկարծ մեր աչքին երևաց մի հիւսնալի պանթալոն—Ալժիր քաղաքը: Դուրս գալով նաւից, երբ արաբ բեռնակիրները, վերցնելով մեր իրեղծները, առաջնորդում էին մեզ, կոնգրէսականներին, զէպի կարեւորը, մենք զարմացած էինք տեսնելով, որ նաւահանգիստից սկսած ամբողջ ծովափնեայ գլխաւոր փողոցը փակված էր գոյնզոյն հիւսնալի ծաղիկներով և դարձաւ նային անուշաբայ վաղը և միւս ծաղիկները առատօրէն թափվում էին անցողիկների և մեր գլխին, աների լուսամուտներից, հիւրանոցներից, կահֆէներէի և վերջապէս երկրասարճների և աղիկների բռնած զամբիւղներից: Բանից դուրս եկաւ, որ այդ օրը քաղաքային վարչութիւնը (municipalité) ծաղիկների կուռ (baille des fleurs) էր սարքել ի պատիւ թէ արեւելագետներին և թէ մի այլ կոնգրէսի, որ կոչվում է «գիտական ընկերութիւններին» կոնգրէս, որ նոյնպէս և իր ժամանակ դուրս եկել է Ալժիրում: «Ծաղիկների կուռ» ասում են մեր շքեղութիւն էր ստացել այդ օրը, երբ իմացվել էր յանկարծ, որ անգլիական թագաւորը և թագուհին ևս հասել են Ալժիր, թէ և անպաշտօնապէս, այսինքն իրոյս

բարեկամական խորհուրդ» և 2) Կանան-Յոյլ «Դիտունական ընկերութիւններ», երկուսն էլ թարգմանութիւն են Ն. Բան. Նիկողոսեանի: Առաջինն արժէ 10 կ., երկրորդը 7 կոպէկ:

